ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-1
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **« ». « ». 2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արմենիա Ինշուրանս ԱՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Դաղունցի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 15.12.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-1** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.14 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-1** ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված **11 457 000** (տասնմեկ միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամի վճարումը, որի վճարումը Պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2Պայմանագրում Պատվիրատուի վավերապայմաններում հաշվեհամարը 900011042471 փոխարինել 900011046373 հաշվեհամարով:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է ( ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 16**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**«Արդշինբանկ» ԲԲԸ**
գործառնական վարչություն	**Հ/Հ՝ 2470100507450000**
Հ/Հ 900011046373	**ՀՎՀՀ՝ 02574465**
ՀՎՀՀ 02882913	**Հեռ:** 011/012 56 04 04
Հեռ. 010 59-61-52	**Էլ. Փոստ:** corporate-ins@armeniainsurance.am
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
_____ Ա. Ֆիդանյան	**_____ Ա. Դաղունց**
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /	**/Գլխավոր տնօրեն/**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 1
<< >> 2026թ.
ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2026/Ա-1 ծածկագրով
գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

Վճարման ժամանակացույց

Ծառայության															ՀՀ դրամ
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	66511180/519	*Ապահովագրական ծախսեր «ԱՊՊԱ»*		2 864 250	2 864 250	5 728 500	5 728 500	5 728 500	8 592 750	8 592 750	8 592 750	11 457 000	11 457 000	11 457 000	**11 457 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011046373
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

FIDANYAN ARA 3108790099
Digitally signed by FIDANYAN

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 16
«Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 2470100507450000
ՀՎՀՀ՝ 02574465
Հեռ: 011/012 56 04 04
Էլ. Փոստ: corporate-ins@armeniainsurance.am

Digitally signed by DAGHUNTS ARMAN 2414780096
Date: 2026.01.23 16:28:42

_____ Ա. Դաղունց
/Գլխավոր տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ